

Երիտասարդների մասնակցայնությունը  
ժողովրդավարական գործընթացներին և  
ներգրավվածությունը Բաց կառավարման  
գործընկերության (ԲԿԳ) հարթակում

Հետազոտական հաշվետվություն

Օգոստոս 2020

Հետազոտական հաշվետվությունը պատրաստվել է «Գիտելիքի փոխանցում՝ Հայաստանում կառավարման հաշվետվողականության և քաղաքացիների մասնակցության խթանման համար» ծրագրի շրջանակներում «ՊրոՄեդիա-Գենդեր» ՀԿ-ի կողմից: Ծրագիրն իրականացվում է ՕքսեՋեն հիմնադրամի կողմից Վիշեգրադի միջազգային հիմնադրամի ֆինանսական օժանդակությամբ:

Ծրագրի նպատակն է նպաստել քաղաքացիների մասնակցայնությանը ժողովրդավարական գործընթացներում՝ բարձրացնելով կառավարման թափանցիկությունը և քաղաքականությունների մշակմանը հատկապես կանանց և երիտասարդության ընդգծված ներգրավվածությունը, և այդ ջանքերը ֆորմալացնել Բաց կառավարման գործընկերության (ԲԿԳ) Հայաստանի 2021-2023 թթ. գործողությունների նոր ծրագրում:

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հապավումների ցանկ .....	4
Մեթոդաբանություն .....	5
Ներածություն .....	6
Առանցքային բացահայտումներ ֆ առաջարկություններ .....	7
I. Երիտասարդների քաղաքական ակտիվությունն ու դրա դրսևորումները հայաստանյան համատեքստում .....	7
II. Երիտասարդների դերն ու մասնակցայնությունը Բաց կառավարման գործընկերությունում (ԲԿԳ) .....	11
III. Երիտասարդների դերը ԲԿԳ Գործողությունների ազգային ծրագրի (ԳԱԾ) շրջանակներում .....	17
Եզրակացություն .....	19
ՀԱՎԵԼՎԱԾ 1 .....	21
ՀԱՎԵԼՎԱԾ 2 .....	24

## Հապավումների ցանկ

ԲԿԳ	Բաց կառավարման գործընկերության
ԳԱԾ	Գործողության ազգային ծրագիր
ԱԽ	Աշխատանքային խումբ
ԱՀՄ	Անկախ հաշվետվական մեխանիզմ
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՔՀԿ	Քաղաքացիական հասարակության կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ԶԼՄ	Զանգվածային լրատվության միջոց

## Մեթոդաբանություն

Հետազոտությունն իրականացվել է փաստաթղթերի վերլուծության, խորացված հարցազրույցների և ֆոկուս-խմբային քննարկման որակական մեթոդների համադրմամբ:

Որակական վերլուծության են ենթարկվել երիտասարդների քաղաքական մասնակցությանը վերաբերող հետազոտություններ, Բաց կառավարման գործընկերության (ԲԿԳ) շրջանակներում տարբեր երկրներում երիտասարդների մասնակցության ուսումնասիրություններ, ԲԿԳ 4-րդ Գործողության ազգային ծրագիրը (ԳԱԾ), հաշվետվությունը և Անկախ հաշվետվական մեխանիզմի (ԱՀՄ) ծրագրի նախագծման վերաբերյալ Հայաստանի 2018–2020 զեկույցը:

Փաստաթղթերում դիտարկվել է երիտասարդների մասնակցության, քաղաքական ակտիվության ընկալումը, արժևորումը, դրանց ժամանակային դինամիկան ու փոփոխությունները՝ ինչպես հայաստանյան, այնպես էլ միջազգային իրականության մեջ:

Խորացված հարցազրույցներն իրականացվել են ՀՀ կառավարությունից ԲԿԳ քարտուղար/ հայաստանյան կոնտակտային անձի, ԲԿԳ աշխատանքային խմբում (ԱԽ) ներառված հասարակական կազմակերպությունների (ՀԿ) ներկայացուցիչների, ԲԿԳ 4-րդ ԳԱԾ-ի հանձնառության ՏՏ լուծումներ իրականացրած կազմակերպության ներկայացուցչի հետ:

Խորացված հարցազրույցների նպատակն է՝ բացահայտել, թե ինչպես են հարցվողները գնահատում երիտասարդների քաղաքական ակտիվությունն ու մասնակցայնությունը Հայաստանում, ինչպես է այդ ակտիվությունը դրսևորվում (առցանց և առկա), ապա քննարկել ԲԿԳ հարթակի շրջանակներում երիտասարդների ունեցած դերակատարումը, սպասելիքներն ու ակնկալիքները ու թե ինչպես է իրականացվում հաղորդակցությունն երիտասարդների հետ այս նպատակով:

Ֆոկուս-խմբային քննարկումն իրականացվել է երիտասարդների հետ, ովքեր ներգրավված են եղել ԲԿԳ-ի գործընթացներում, երիտասարդական ՀԿ-ների ներկայացուցիչներ են, ինչպես նաև ակտիվ երիտասարդներ: Ֆոկուս-խմբային քննարկման նպատակն էր երիտասարդների շրջանում բացահայտել իրենց քաղաքական ակտիվության, ակտիվության ձևերի նախապատվության հարցերը, ապա հասկանալ, թե ինչպես են գնահատում ԲԿԳ հարթակը՝ որպես մասնակցայնության գործիք, որքանով են տեղեկացված հարթակին մասնակցելու ընթացակարգերից և ինչպես են ստանում տեղեկատվությունը:

Հավաքագրված ամբողջ տեղեկատվությունը վերլուծվել է հետազոտության մի քանի հիմնական բաժինների շուրջ, որոնք են՝ երիտասարդների քաղաքական ակտիվությունն ու դրա դրսևորումները հայաստանյան համատեքստում, նրանց դերն ու մասնակցայնությունը ԲԿԳ-ում և ԳԱԾ-ի շրջանակներում՝ դրանց վերաբերյալ ներկայացնելով համապատասխան առաջարկներ:

## Ներածություն

Աշխարհում կա 1.8 միլիարդ երիտասարդ և սա մոլորակի ամենաարագ աճող տարիքային խումբն է: Չնայած դրան ու երիտասարդների ակտիվությանը, Նրանց ձայնը լսելի չէ որոշումների կայացման մակարդակում, հատկապես՝ զարգացող երկրներում:

Բաց կառավարման միջոցով երիտասարդ ակտիվիստները փորձում են իրենց համայնքներում նպաստել գլոբալ և տեղական բնույթի խնդիրների լուծմանը և անհավասարությունների հաղթահարմանը՝ կենտրոնանալով ինչպես խնդիրների լուծման վրա, այնպես էլ **տեղական մակարդակի սահմաններից դուրս փոփոխությունների խթանմանը**: Իրականացվող գործողությունները և կիրառված գործիքները նպաստում են **երիտասարդների սոցիալական և քաղաքացիական կարողությունների զարգացմանը և որոշումներ կայացնողների կարողությունների բարձրացմանը**, որպեսզի նպաստեն բաց, բազմազան, միջմշակութային և հանդուրժող հասարակություն կառուցելուն:

Երիտասարդների պարագայում մասնակցությունը ենթադրում է ներկայացվածություն քաղաքական գործընթացներում և որոշումների կայացման մակարդակում: Մասնակցությունը ներառում է որևէ խնդրի վերաբերյալ հանրային նախաձեռնություններ իրականացնելուց մինչև քաղաքական կուսակցությունների երիտասարդական թևերում ներգրավվելը, միջազգային ուսանողական կազմակերպություններին անդամակցելը և այլն: Երիտասարդների մասնակցությունն, այնուամենայնիվ, ամենից հաճախ նույնականացվում է երիտասարդների **ներառման** հետ՝ կառավարության, կազմակերպությունների, հանրային ծառայությունների և կառավարման բազմամակարդակ համակարգերում՝ տեղականից մինչև գլոբալ: Իրական մասնակցությանն աջակցող հիմնական պահանջներն են իրավական շրջանակները, տեղեկատվության տրամադրումը, մշակութային և վերաբերմունքի փոփոխությունը մեծահասակների և որոշում կայացողների շրջանում, քաղաքականության, ծառայության կամ կազմակերպչական գործընթացներում երիտասարդության ներգրավման մեխանիզմները, բողոքն արտահայտելու հնարավորությունները<sup>1</sup>:

Մակերեսորեն նայելու պարագայում մեզ կթվա, թե երիտասարդները քաղաքականապես ավելի քիչ են ներգրավված այսօր, քան նախորդ սերունդները: Այս տպավորությունը պայմանավորված է նրանով, որ ընտրություններին մասնակցող կամ քաղաքական կուսակցություններին միացող երիտասարդների թիվն է նվազել, բայց հետազոտությունները ցույց են տալիս, որ երիտասարդ

<sup>1</sup> [https://www.youthpolicy.org/library/wp-content/uploads/library/Youth\\_Policy\\_Working\\_Paper\\_03\\_201607.pdf](https://www.youthpolicy.org/library/wp-content/uploads/library/Youth_Policy_Working_Paper_03_201607.pdf)

սերունդը հաճախ նախընտրում է քաղաքականապես ներառվելու նոր ձևեր և եղանակներ:

## Առանցքային բացահայտումներ և առաջարկություններ

### I. Երիտասարդների քաղաքական ակտիվությունն ու դրա դրսևորումները հայաստանյան համատեքստում

Հայաստանի Հանրապետությունում (ՀՀ) ապրում է 802535 երիտասարդ (18-30տ.), որը բնակչության 26.6%-ն<sup>2</sup> է (Մարդահամար, 2011թ.): Այն, թե երիտասարդները ՀՀ-ում քաղաքականապես ավելի թե նվազ ակտիվ են հիմա, գնահատականները միանշանակ չեն: Պետական համակարգի ներկայացուցչի ու երիտասարդների կարծիքով, հետհեղափոխական շրջանում (2018թ-ից ի վեր) երիտասարդները քաղաքականապես ավելի ակտիվ են դարձել, քանի որ ավելի վստահ են իրենց ուժերին ու հավատում են իրենց ազդեցությանը: Սա հեղափոխության ժամանակ ունեցած իրենց մեծ դերակատարման ու նախաձեռնողականության արդյունքն է թերևս: Սակայն այստեղ կա վերապահում, թե մասնակցությունն ասելով ինչ ենք հասկանում. «Օրինակ, տարբեր ակցիաներին, միջոցառումներին գնալ, մասնակցելու առումով, այո, ակտիվ են, բայց կարծիք, դիրքորոշում հայտնելու, պահանջներ ձևակերպելու՝ ոչ այնքան, քանի որ կարողությունները թույլ են: Ուստի ճիշտ կլինի ասել, որ ավելի շատ աջակցում են առկա քաղաքական ակտիվություններին», - կարծում է Կառավարության ներկայացուցիչը:

Երիտասարդների կարծիքով, մասնակցության տեսանկյունից ավելի բարձր է երիտասարդների ակտիվությունը տեղական մակարդակում, ինչպես նաև՝ ավելի արդյունավետ: ՏԻՄ-երը, քաղաքական տարբեր ուժերը ուզում են իրենց շարքերում երիտասարդներ ունենալ, բայց լավ չեն պատկերացնում երիտասարդների իրական մասնակցության նպատակն ու ձևաչափը ինչպիսին կարող է լինել. տեղական մասնակցության համար պլատֆորմների սակավություն կա: Մարզային, ազգային մակարդակով մասնակցայնության պլատֆորմներ քիչ թե շատ՝ կան (նախարարություններին կից հասարակական խորհուրդներ, պետական երիտասարդական քաղաքականության ռազմավարության աշխատանքային խումբ, քաղաքական տարբեր ուժերի հարթակներ, մարզպետարաններին կից երիտասարդական խորհուրդներ և այլն), որոնք, սակայն, արդյունավետության ցածր մակարդակ ունեն՝ երիտասարդների գնահատմամբ, բացի այդ՝ դյուրին էլ չեն մասնակցայնության առումով, ու երիտասարդները, հաճախ, այդքան հնարավորություն ու հմտություններ չեն ունենում այդ շարքերում ընդգրկվելու համար:

Երիտասարդներն այսօր կարևորում են իրենց ունեցած «դեկորատիվ դերից», ինչպիսին էր նախքան հեղափոխությունը, անցումն իրական գործունեության: Հետհեղափոխական ակտիվության մեջ էլ երիտասարդների մոտ դեռ հանրային

<sup>2</sup> <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=96116>


շահի գիտակցումը լավ չեն տեսնում, նկատում են, որ ավելի անձնական նպատակներ են հետապնդում իրենց մասնակցայնությամբ: «Ամեն մարդ իր ծառն է ջրում մեզանում, ու բացարձակ անտարբեր է կռիկտիվ շահի հանդեպ: Եթե կարողանայինք մի քանի հզոր գործարար աճեցնել՝ թվով 20, ովքեր իրենց հետ կրերեին կռիկտիվ շահի առավելությունների գիտակցում, ովքեր կունենային իրական բիզնես մտածելակերպ, ինչպես Հենրի Ֆորդի պարագայում, որ ստեղծում էր համայնքների բարեգործական մոդել՝ ուսուցման միջոցով, կստեղծվեր այդ կռիկտիվ մշակույթը: Ամեն մեկն իր գործը կաներ՝ հասկանալով, որ դա մի մեծ գործի մասն է, որը օգտակար է ընդհանուրի համար: Իսկ եթե բիզնեսը կայուն է և ուժեղ, կարող է քաղաքականություն թելադրել՝ լավ իմաստով»:

Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) ներկայացուցիչների գնահատմամբ, սակայն, երիտասարդների քաղաքական ակտիվությունն իրավիճակային է՝ ըստ իրադրության արձագանքող, ինչը ենթադրում է, որ այդ ակտիվությունը նպատակադրվածության, գիտակցվածության, գաղափարական հենքի ու կազմակերպվածության պակաս ունի: Այս միտքը կիսում է նաև կառավարության ներկայացուցիչը՝ համարելով, որ չնայած ակտիվացել են, բայց կա ուղղորդման պակաս, ինչի համար անհրաժեշտ են երիտասարդական ուղղվածությամբ ավելի շատ ծրագրեր, միջոցառումներ ու ոչ թե մասնատված, այլ շարունակական ու մոտիվացնող: Այս ծրագրերի արդյունքում նրանք կկրթվեն ու ավելի իմաստավորված կլինի մասնակցությունը, հատկապես եթե թվարկված նախաձեռնություններում երիտասարդները ներգրավված լինեն այդ ծրագրերի ու միջոցառումների մշակման ու իրականացման փուլերում ևս, այլ ոչ միայն լինեն դրանց շահառուներ:

Այն, որ երիտասարդները հետաքրքրված են ու իրենց համար իսկապես կարևոր են երկրի կառավարումն ու դրան առնչվող հարցերը, արդյունավետ ինստիտուտներ ունենալը, խոսում է ստորև ներկայացված պատկերը: 1-5 բալանոց սանդղակով, որտեղ 1-ը ամենաանկարևորն է, 5-ը՝ ամենից կարևորը, նրանք գնահատել են նշված թեմաները/խնդիրները.

## 2. Թվարկված թեմաները/խնդիրները գնահատեք 1-5 բալանոց սանդղակով ըստ՝ ձեզ համար դրա ունեցած առաջնահերթության:


Mentimeter





## 2.2. Թվարկված թեմաները/խնդիրները գնահատեք 1-5 բալանոց սանդղակով ըստ՝ ձեզ համար դրա ունեցած առաջնահերթության:

Mentimeter



Ինչպես տեսնում ենք, ֆոկուս խմբում ընդգրկված երիտասարդների համար ամենից կարևոր 2 թեմաները/խնդիրները, որ հավաքել են առավելագույն միավորները՝ 4.5, «Լավ կառավարում և արդյունավետ ինստիտուտներ» և «Լավ կրթություն» կատեգորիաներն են: Իսկ եթե լավ կառավարումը այդքան կարևոր է երիտասարդի համար, հետևաբար նա մոտիվացված էլ կլինի իր դերակատարումն ու մասնակցությունն ունենալ այդ գործում: «Սրա ինդիկատորներից մեկը նաև պետական կառավարման համակարգում, ԱԺ-ում, ՏԻՄ-ում երիտասարդ պաշտոնյաների մեծ թիվն է հեղափոխությունից հետո», - նշում են ֆոկուս խմբի մասնակիցները:

Ինչպես դիագրամ առաջինում, այնպես էլ ֆոկուս խմբային քննարկման ժամանակ երիտասարդների կողմից հատկապես կարևորվեց ավելի լավ աշխատանքային հնարավորություններ ունենալու հիմնախնդիրը: Նրանք առաջնային համարեցին երիտասարդների շրջանում ինչպես գործազրկության խնդրի կարևորման, բարձրաձայնման ու դրա շուրջ գործնական քայլերի իրականացումը, այլև երիտասարդների աշխատանքային հնարավորությունների վերաբերյալ քաղաքականությունների մշակման գործընթացում երիտասարդների մասնակցության ապահովումը:

Քաղաքական ակտիվությունն այսօր, հատկապես համավարակի պայմաններում, առավելապես տեղափոխվել է օնլայն հարթակ: Օնլայն ակտիվության դրսևորումներն ամենից տարածվածն են երիտասարդության շրջանում, քանի որ այդպես ավելի հարմար է ու հասանելի տարածքային առումով, ապա՝ օնլայն տիրույթում ավելի հեշտ է լինել գործողությունների համար անպատասխանատու, չգսպել ինքնաարտահայտման ցանկությունները՝ առանց հետևանքների մասին մտածելու և այլն: Մակայն առկայության հետ մեկտեղ՝ օնլայն տիրույթում ունենք «որակյալ» ակտիվության պակաս, «ֆեյք նյուզերին» տրվող մի

հոծ զանգված՝ նաև երիտասարդների շրջանում, երիտասարդներ, ովքեր մեղիագրագետ լինելու կարիք ունեն:

Օֆլայն ակտիվությունը ենթադրում է ավելի մեծ պատրաստվածություն, պետք է լինի մտածված, կազմակերպված: Արդյունքում, մեզանում օֆլայն քաղաքական ակտիվությունն է ավելի լուրջ ուշադրության արժանանում հետևանքի ու արդյունքի տեսանկյունից՝ կարծում են կառավարության և ՔՀԿ ներկայացուցիչները: Իսկ այս 2 գործիքակազմերի սինթեզն ամենից արդյունավետն է համարվում. օնլայն ակտիվությունը՝ որպես գաղափարների տարածման, լսարանը մեծացնելու, շարունակականությունն ապահովելու, իսկ օֆլայն ակտիվությունը՝ այդ գործընթացները լրջացնելու, գաղափարական ու շարունակական դարձնելու միջոց:

Օֆլայն ակտիվության պակասը՝ ի համեմատ օնլայնի, պայմանավորում են նաև երիտասարդների փորձի պակասով, դեմ առ դեմ հանդիպումների ու քննարկումների, համապատասխան գիտելիքի ու ինֆորմացիայի բացակայությամբ կաշկանդված լինելով, մինչդեռ օնլայնի դեպքում սա ավելի հեշտ է. «Գիտելիքի, տեղեկացվածության ու կարողությունների պակասը, մեղիագրագիտության բացերը դրսևորվում են նաև օնլայն ակտիվության որակում, հակառակ դեպքում այն կլինեք ավելի առարկայական, քան վերացական, ինչպես հիմա շատ ավելի հաճախ պատահում եմ», - նշում է ԲԿԳ հայաստանյան կոնտակտային անձը: Այնուամենայնիվ, եթե օֆլայն քաղաքական մասնակցություն, ապա էլի երիտասարդներն են նախաձեռնում՝ համամիտ են հարցվողները:

Քաղաքական օնլայն ակտիվության համար մեզանում կան որոշ գործիքներ, որոնցից նշվեցին e-request-ն ու e-draft-ը, որոնցից 1-ի տարածվածությունը գնալով մեծանում է, չնայած մինչ օրս անգամ կան լրագրողներ, որ տեղյակ չեն այդ աշխատանքային գործիքի մասին, որի կարևորությունը հատկապես բարձրացավ համավարակի պայմաններում: Նման հարթակների նշանակության, օգտագործման վերաբերյալ քիչ է հաղորդակցությունը: Իհարկե, եթե հետ նայենք, ապա դրական իմաստով դիմամիկա կա՝ հարթակները գնալով շատանում են, ու տեղեկացվածությունը՝ մեծանում, բայց որը դեռևս բավարար չէ, մինչդեռ կարիքը միշտ կա:

Երիտասարդների քաղաքական ակտիվությանը, մասնակցությանը խոչընդոտող հիմնական գործոնները մշակութային են՝ արժեհամակարգային, գաղափարական, նաև քաղաքական: «Ի՞նչ են ուզում, արդյո՞ք կա ձևակերպված պահանջ՝ դեպի դրական փոփոխություն, արդյո՞ք կա երկրի զարգացման իրենց տեսլականը. այս հարցերի պատասխաններն են, որ իրենք լավ չեն պատկերացնում»: ՔՀԿ ներկայացուցչի կարծիքով պատճառը մեր երկրի ընդհանուր քաղաքական կուրսն է, որն անտարբեր է դարձնում երիտասարդին, քանի որ սպասելիքները չեն արդարացվում, արագ արձագանք չի լինում և, ի վերջո, կրթական այն համակարգն է խնդիրը, որ ունենք: «Եթե կրթական համակարգն ի սկզբանե չի ներդնում, չի ուժեղացնում երիտասարդների այն պատկերացումը, որ

իրենց երկրում նրանք կարող են ինչ-որ բան անել, ինչ-որ բան փոխել, նրանք դառնում են անտարբեր, ումանք կրթական ծրագրեր են փնտրում ու գնում այլ երկրներում լավ ապրելակերպի հետևից: Պետության կամքը պետք է լինի կրթական համակարգի այնպիսի փոփոխման, որ ակտիվ, մասնակցային, երկիրը փոխող երիտասարդ ունենա, որը, ցավոք, չեմ տեսնում. դեռ՝ հակառակը, ավելի վատանում է»:

Խոչընդոտները նաև հոգեբանական են: Երիտասարդները խնդիր ունեն իրավահավասար զգալու իրենց մյուս բոլոր տարիքային խմբերի հետ, անինքնավստահ են՝ մտածելով, որ պետք է ճանապարհ անցնեն, որ կարծիք հայտնեն:

Իսկ երիտասարդների կարծիքով խոչընդոտներն ավելի շուտ կապված են մեր ունեցած քաղաքական միջավայրի ու դերակատարների որակի հետ, այն բազմաթիվ «կեղտոտ» կարծրատիպերի, որ կան քաղաքականության մասին ու քաղաքական ակտիվության շուրջ: Սա հատկապես ազդում է այս կամ այն քաղաքական ուժին հարելու ցանկությունների վրա, որի հետ ապագայում նույնականանալու են: Քաղաքական ակտիվությունն այսօր ավելի բարդ է կանանց համար. վերջին դեպքերը մտաբերելով՝ նշում են, որ կին քաղաքական գործիչների վրա հատկապես այն շատ թանկ է նստում՝ ընդհուպ մինչև առողջական լուրջ խնդիրներ:

## II. Երիտասարդների դերն ու մասնակցայնությունը Բաց կառավարման գործընկերությունում (ԲԿԳ)

ԲԿԳ միջազգային նախաձեռնություն է, որտեղ պետական բարեփոխումները ստանձնած պաշտոնյաներն ու քաղաքացիական հասարակության առաջնորդները համատեղ ջանքերով գործողությունների ծրագիր են մշակում՝ կառավարումն ավելի մասնակցային, պատասխանատու և հաշվետու դարձնելու նպատակով: Հայաստանը ԲԿԳ-ին միացել է 2011 թ.: Այդ պահից ի վեր գործողությունների երեք ծրագիր է իրականացվել<sup>3</sup>: Այժմ ընթացքի մեջ է գործողությունների չորրորդ ծրագիրը:

Հայաստանը 2018 թվականին քաղաքական զգալի փոփոխություններ է վերապրել, որոնց արդյունքում ձևավորված նոր կառավարությունն ավելի մեծ պատրաստակամություն է հայտնել թափանցիկության բարելավման և կոռուպցիայի դեմ պայքարի նպատակով բարեփոխումներ ձեռնարկելու ուղղությամբ: Հայաստանի գործողությունների չորրորդ ծրագիրն արտացոլում է նոր կառավարության ստանձնած՝ բարեփոխումների և թափանցիկության բարելավման խոստումը:

<sup>3</sup> [https://www.opengovpartnership.org/wp-content/uploads/2019/10/Armenia\\_Design-Report\\_2018-2020\\_ARM.pdf](https://www.opengovpartnership.org/wp-content/uploads/2019/10/Armenia_Design-Report_2018-2020_ARM.pdf)

Համաձայն ԱՀՄ զեկույցի<sup>4</sup> (ուսումնասիրում է գործողությունների բոլոր ծրագրերը՝ համոզվելու, որ կառավարությունները հետևում են ստանձնած հանձնառություններին) Հայաստանի գործողությունների չորրորդ ծրագրի մշակումը գործողությունների նախորդ ծրագրի համեմատ իրականացվել է հանրային իրազեկման և քաղաքացիական հասարակության ներգրավվածության ավելի բարձր մակարդակով: Առաջին անգամ հանրային խորհրդատվություններ են անցկացվել երկրի բոլոր 10 մարզերում՝ որպես թիրախային խմբեր ներառելով նաև քաղաքացիական ծառայողներին և երիտասարդներին: Ընդհանուր առմամբ, երկրի ողջ տարածքում անցկացվող խորհրդակցությունները հանգեցրին ծրագրի մշակման ավելի համագործակցված գործընթացին, իսկ օրենսդրական փոփոխությունների պատրաստակամությունն օգնեց ստեղծելու նախորդ փուլի համեմատ ավելի հավակնոտ ծրագիր: Հայաստանի գործողությունների չորրորդ ծրագիրն ուղղված է Կառավարության տրամադրության տակ առկա տեղեկատվության մատչելիության բարձրացմանը և հանրության մասնակցության խթանմանը:

Բաց կառավարման ռազմավարությունների և նախաձեռնությունների նպատակն է աջակցել ժողովրդավարությանն ու ներառականության զարգացմանը: Ուստի, բաց կառավարումը և շահագրգիռ կողմերի մասնակցային նախաձեռնությունները պետք է հատուկ ջանքեր ներառեն՝ հասնելու հասարակության ամենից կարևոր, խոցելի, մարզինալացված խմբերին: Չնայած երիտասարդությունը բավականին տարասեռ խումբ է իր հմտություններով, կարողություններով, հաճախ ավելի դժվարին խումբ է համարվում հասարակության մեջ իրենց ձայնը լսելի դարձնելու տեսանկյունից: Այս առումով երիտասարդները կարող են համարվել խմբերից մեկը, որ պահանջում է հաղորդակցության հատուկ ջանքեր<sup>5</sup>:

Բաց կառավարման գործընկերության, դրա նախաձեռնությունների, ռազմավարությունների, արժեքների ու, առհասարակ, մշակույթի մասին իրազեկման մեծ բաց կա հայաստանյան հանրության շրջանում, այդ թվում և երիտասարդների: Երիտասարդները՝ որպես առանձին խումբ, թիրախավորված չեն ԲԿԳ հաղորդակցության սկզբունքներում, ինչպես և հասարակության մյուս բոլոր խմբերը: Երիտասարդներին ուղղված միակ հաղորդակցության ալիքը, որ հնարավոր է առանձնացնել, դա 2018թ-ի մի քանի հանդիպումներն էին ԵՊՀ Լրագրողական ֆակուլտետի ուսանողների հետ, որը, սակայն, առանձնապես արդյունք չտվեց մասնակցայնության իմաստով, քանի որ պետության կողմից սկսած այդ երկխոսությունը պետք է լինի ոչ միայն ծրագրերի մշակման փուլում, այլ անընդհատ՝ և՛ իրականացման, և՛ ամփոփման, հակառակ դեպքում անիմաստ է դառնում: «Որոշ մարզային այցելություններ ևս ունեցել ենք, բայց էլի քիչ է, ու լավ կլիներ վիրտուալ հարթակներ մշակել ու իրենց հետ կապը ավելի հաճախ պահել:

<sup>4</sup> [file:///C:/Users/User/Downloads/Armenia\\_Design-Report\\_2018-2020\\_ARM.pdf](file:///C:/Users/User/Downloads/Armenia_Design-Report_2018-2020_ARM.pdf)

<sup>5</sup> [https://www.oecd.org/mena/governance/Young-people-in-OG.pdf?fbclid=IwAR2rPB5fqi5Irm1yoHQrZUHuUHDZOH\\_Clk-6d3j6i2Kt-VLCS9bxxnl21LUw](https://www.oecd.org/mena/governance/Young-people-in-OG.pdf?fbclid=IwAR2rPB5fqi5Irm1yoHQrZUHuUHDZOH_Clk-6d3j6i2Kt-VLCS9bxxnl21LUw)

Օրինակ, Ձում հավելվածի միջոցով, որ մոտիվացնենք, որ զգան իրենց ներուժի ազդեցությունն այս գործընթացում», - կարծում է ԲԿԳ հայաստանյան ներկայացուցիչը:

Հաղորդակցության պակասի, առկա բացերի ու խնդիրների մասին միակարծիք էին բոլորը՝ կառավարության ներկայացուցչից մինչև ՔՀԿ ներկայացուցիչներ ու երիտասարդներ: Կառավարության ներկայացուցիչը՝ որպես ԲԿԳ ծրագրի պատասխանատու անձանցից մեկը, սրա պատճառ է համարում ռեսուրսների պակասը. «ԲԿԳ-ն ռեսուրսներ նախատեսում է հաղորդակցության համար, բայց պետք է նաև աջակցություն ունենանք ՔՀԿ գործընկերներից, իրենց ծրագրերում նախատեսեն երկխոսության այդ կոմպոնենտը»:

Ֆոկուս խմբի մասնակից երիտասարդների մի մասը տեղյակ էր ԲԿԳ-ի մասին. նրանք, ովքեր պետական համակարգում կամ ՀԿ-ներում են աշխատում: Աշխատավայրից բացի, մի քանիսը Ֆեյսբուք սոցիալական ցանցի միջոցով էին տեղեկացել, բայց առանձնապես շատ բան չգիտեին հարթակի մասին, որովհետև ինչպես կայքի, այնպես էլ Ֆեյսբուքի կոնտենտը հարմարեցված չէ երիտասարդների համար՝ ոչ հասկանալի է, ոչ էլ գրավիչ: «Ֆեյսբուքյան էջում պետք է շատ ավելի ակտիվ լինել ու հետևել SMM-ի կանոններին, տպավորությունն այնպիսին է, որ իրավիճակային, պատահական, չպլանավորված գրառումներ ու հրապարակումներ են արվում: Հեքթրոնը՝ նորարար գաղափարների և ծրագրավորման մրցույթը, որ կազմակերպվել էր 2019թ-ի ապրիլի 13-ին և որն ուղղված էր կառավարման թափանցիկության ու հաշվետվողականության, կոռուպցիոն ռիսկերի նվազեցման համար նորարարական լուծումների մշակմանը, շատ լավ նախաձեռնություն էր ու լավ կազմակերպված: Նման միջոցառումները շատ լավ տեղեկատվական առիթ են ու պետք է ավելի հաճախ լինեն: Կայքն էլ, ոնց որ պետական մարմնի կայք մտնես ու չհասկանաս, նույնիսկ չուզես հասկանալ ինչ ինֆորմացի է այնտեղ. գուցե նկարներով, տեսահոլովակներով ավելի շատ պետք է մատուցել տեղեկատվությունը: 80%-ը նկար ու վիդեո են նայում, ոչ թե տեքստ կարդում. նաև երիտասարդի լեզվով է պետք խոսել»:

Երիտասարդները ԲԿԳ-ին շարունակում են հետևել Ֆեյսբուքի միջոցով, բայց առաջարկում են, որ ոլորտային հետաքրքրությունները ֆիլտրող գործիքի միջոցով կարողանան բաժանորդագրվել կայքին ու պարբերաբար տեղեկացվեն այդ ոլորտի հանձնառություններից ու արդյունքներից: Հաղորդակցության մյուս առաջարկը, որը նաև հաղորդակցության առկա բացի մասին է, հետադարձ կապի բացակայությունն է նրանց հետ, ովքեր հանձնառության առաջարկով են հանդես գալիս ԲԿԳ-ին. «Դիմել եմ հանձնառության առաջարկով, բայց ոչ մի արձագանք չեմ ստացել առաջարկս մերժելու մասին: Ինքս եմ հետո գտել հաստատված հանձնառությունների ցանկը, որ տեսնեմ՝ առաջարկս հաշվի առել են, թե ոչ. սա շատ կարևոր է կապի շարունակականության ու երիտասարդների մոտիվացման համար»:

ԲԿԳ-ից լավատեղյակ ու գործընթացներին մասնակից երիտասարդները կարևորում են ԲԿԳ հարթակում «թարմ ուղեղ» ունենալու գաղափարը, որ համակարգը չկարծրանա՝ միևնույն ժամանակ հավելում, որ անփորձ մարդը գուցե չհասկանա էլ՝ ինչի մասին է խոսքը: «Ամենից օպտիմալ տարբերակն ինձ համար նոր մարդիկ ունենալն է թիմում, ովքեր քառակուսիներից դուրս կմտածեն ու առաջարկներ կանեն, բայց նրանց զուգահեռ պետք է լինեն նաև գործից հասկացող մարդիկ, որպեսզի առաջարկված գաղափարները տեղավորվեն ԲԿԳ շրջանակներում: Հեքլթոնի, Պեչաքուչայի ֆորմատները երևի երիտասարդների համար են»:

Երիտասարդներն առաջարկում են նաև ԲԿԳ գործընթացում կամավորների, ինտերնների ներգրավում, ովքեր հետո աճելու են ու լիարժեք մասնակիցը դառնան հարթակի: Նաև, սա հնարավորություն կտա ավելի շատ ներսի գործ անել՝ այդպիսով կոմպենսացնելով նաև աշխատակազմի բացը, որի կարիքը նշվում է ԲԿԳ պատասխանատուների կողմից: Կարևորում են նաև երիտասարդական միջոցառումների կազմակերպումը, հատկապես Երևանից դուրս՝ մարզային ՀԿ-ի շուրջ, ինչպիսին, օրինակ՝ Արմավիրի զարգացման կենտրոն ՀԿ-ն է, որ համակարգում է 4-րդ ԳԱԾ-ը: Սա հնարավորություն կտա նաև մարզային բնակչությանը, հատկապես երիտասարդներին զարգացնել, իրենց խնդիրներն ավելի լավ պատկերացնել ու բարձրաձայնել:

ՔՀԿ ներկայացուցիչն առաջարկում է, որ ԲԿԳ Աշխատանքային խումբն (ԱԽ) ունենա հաղորդակցության ռազմավարություն, որ հանրությանը, դրա առանձին խմբերին՝ թիրախավորված և պատշաճ իրազեկի հարթակի ու մասնակցության ընթացակարգերի մասին: ԱԽ-ի կողմից առաջարկվել է նաև, որ ամեն նախարարության մամուլի բաժինը, որը ԳԱԾ-ում ունի հանձնառություն, համագործակցի ՁԼՄ-ների հետ՝ տվյալ հանձնառության շրջանակներում իրականացվող աշխատանքների մասին պարբերաբար իրազեկելով, նյութեր տրամադրելով, քննարկումներ կազմակերպելով, մամուլն ասուլիսներ հրավիրելով, որոնց նախադեպերը, սակայն, չկան:

Կա կարծիք, որ եթե գործընթացը պատշաճ հանրայնացվի ու տեղեկացված լինեն մեծ հանրույթներ, այսպես, թե այնպես երիտասարդներն ամենաակտիվը կլինեն մասնակցայնության մեջ: «Ես հիշում եմ, որ մարզային հանդիպումներին էլի երիտասարդներեն էին ավելի ակտիվ մասնակցում», - ասում է քաղ. հասարակության ներկայացուցիչը:

Այստեղ մեծ ուշադրություն է պետք դարձնել նաև լրագրողներին, որպեսզի նրանք էլ իրենց հերթին հանրայնացնեն տեղեկատվությունը. «Սա իսկապես այն հարթակն է, որտեղ ՔՀԿ-ն ու պետությունը միասին՝ մասնակցային ու համագործակցության սկզբունքով, աշխատում են ու մշակում այդ բարեփոխումները, արդյունքում ինչ-որ բաներ տանելով դեպի լավը: Բայց սա շատ փոքր խումբ է, ու ես միշտ բարձրաձայնել եմ, որ հաղորդակցության պակաս կա թե՛

մասնակցայնությունն ապահովելու, թե՛ արդյունքների մասին լուսաբանելու մասով»:

Հաղորդակցության, հանրության իրազեկման բացը ակնհայտ էր նաև Google-ի առցանց հարցման գործիքով առաջարկներ հավաքելու փուլում, որն իրականացվեց Արմավիրի զարգացման կենտրոնի ՀԿ-ի կողմից 2019թ-ին՝ ԲԿԳ հայաստանյան գործողությունների ազգային 4-րդ ծրագրի մշակման գործընթացում: Google հարցաթերթիկի հիմնական նպատակն էր երիտասարդների ձայնը լսելի դարձնելը, քանի որ այն հնարավորություն էր տալիս ներկայացնելու գաղափար բոլոր նրանց, ովքեր հետաքրքրված էին: Իսկ առցանց գործիքների օգտագործումը հիմնականում տարածված է երիտասարդների շրջանում հենց: Գործիքի արդյունքում, սակայն, հավաքագրվեց ընդամենը 47 գաղափար (70%-ը՝ երիտասարդներից), որոնց մեծամասնությունը հիմնականում չէին համապատասխանում ԲԿԳ փիլիսոփայությանը:

ԲԿԳ հաղորդակցության գործընթացում կառավարության կողմից օգտագործվել էին հիմնականում ԱԽ-ի ՀԿ-ներն ու դրանց ցանցերը, իսկ գործիքներից՝ ՀՀ կառավարության, ԲԿԳ-ի կայքերը և դրանց ֆեյսբուքյան էջերը: «Ցանկալի է, որ երիտասարդական համայնքներ լինեն, հատկապես ՏՏ համայնք՝ ԲԿԳ-ի դեպքում, որտեղ ԲԿԳ-ի հաղորդակցության մի ալիքը կարող է պլանավորվել: Այս պահի դրությամբ, օրինակ, Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի գործառույթն է սրան մոտ, որ մենք՝ տեղեկատվական տեխնոլոգիաների (ՏՏ) ոլորտի ներկայացուցիչներս, գիտենք, որ ամեն նորություն կարող ենք իր մոտ տեսնել»:

ՔՀԿ ներկայացուցչի կարծիքով, հաղորդակցության բացը պայմանավորված է ԲԿԳ բոլոր համակարգողների կամքի բացակայությամբ: Համոզված է, որ անգամ սուղ ռեսուրսների պայմաններում, հաղորդակցությունը կարելի է իրականացնել ՀՀ կառավարության մամուլի բաժնի միջոցով, քանի որ ԲԿԳ-ն կառավարության ծրագրերից մեկն է. «Կառավարության մամուլի բաժինը հանձնառությունների արդյունքների վերաբերյալ նյութեր պետք է անընդհատ պատրաստի ու տարածի կայքի միջոցով, լրատվամիջոցներով, բայց շարունակական, որ հիշվի, հասկացվի: Ասում են. ռեսուրսի ինդիք է՝ աշխատող չունենք, անձնակազմ չկա: Բայց, ի վերջո, սա Կառավարության նախաձեռնությունն է ու կարևորման դեպքում կարելի էր այսքան ժամանակ 1 աշխատող ունենալ հասարակայնության հետ կապերի գործառույթ իրականացնող՝ ԲԿԳ-ի մասով: ԱԽ-ի հանդիպումները ևս վատ վիճակում են վերջին 2 տարիների ընթացքում. ժամանակ չի գտնում Կառավարությունը, մինչդեռ պայմանավորվել էինք հանդիպել 3 ամիսը մեկ»:

Այս պահին չկա ձևավորված ԱԽ: Կառավարության ներկայացուցիչը նշեց, որ ԱԽ ձևավորելուց առաջ աշխատակարգ պետք է ձևավորեն, որ հասկանան՝ ինչպես են ամեն ծրագրի համար նոր շահագրգիռ կողմեր հրավիրելու, որովհետև տարիներ շարունակ նույն գործընկերներն են աշխատանքային խմբում. «Բայց երբ նայում ես հանձնառություններին, հասկանում ես, որ այդ գործընկերներն առանձնապես մեծ

ներդրում չունեն դրանց հարցում: Կարիքի վրա հիմնված գործընկերներ ենք նախատեսում ունենալ: Խումբը երևի մյուս տարի կձևավորվի, դեռ առաջնային չի»: Իսկ թե հնարավոր է արդյոք քվտավորում նախատեսել աշխատանքային խմբում երիտասարդներին կամ երիտասարդական ՀԿ-ներին ներառելու համար, տարբերակ որպես նշվում է այնպիսի հանձնառություն ունենալը, որի բաղադրիչը երիտասարդներն են լինելու. «Այն դեպքում, եթե երիտասարդները ակտիվ լինեն ու հանձնառություններ ներկայացնեն, հավանական է, որ լինեն ԱԽ-ի կազմում»:

Հաղորդակցության մասով բավականին աշխատանք իրականացվում է ՔՀԿ-ների կողմից՝ հեռուստահաղորդումներ, տեղեկատվական թերթիկներ, ինչը, սակայն, քիչ է, քանի որ ՀԿ-ներն էլ այս ամենը կարողանում են իրականացնել, եթե դրամաշնորհով նախատեսված նման բաղադրիչներ ունեն: «Հաճախ այս նախաձեռնություններում Կառավարության անդամներին ներգրավելու համար խնդրում էինք կամ դիմում իրենցից բարձր այս կամ այն պաշտոնյային՝ պաշտոնական լծակներով ազդելու համար, որ համագործակցեն, մինչդեռ պետք է լիներ հակառակը»:

Իսկ կառավարության համար երիտասարդությանը՝ որպես շահագրգիռ կողմ ունենալը ԲԿԳ ռազմավարության և նախաձեռնությունների կենտրոնում, կարևոր է, քանի որ երիտասարդները եկող սերունդն են, պետական գործընթացների ձևակերպողը, առաջ տանողն ու դրանց սեփականատերերը, ուստի նրանց մասնակցությունն ու ներուժի զարգացումը՝ շատ կարևոր: «Նախադպրոցական տարիքից սկսած կրթության միջոցով պետք է հասնել նրան, որ երիտասարդների կարողությունները՝ որպես քաղաքացիներ, հզորացվեն ու ցանկացած բարեփոխում արվի այսօրվա երիտասարդի մասնակցությամբ, երիտասարդի համար, որովհետև նա է տերը այդ բարեփոխման: Մա պետք է լինի հիմքն ու շահագրգռվածությունը»:

Սակայն, երիտասարդության շրջանում պատկերացումը շատ թյուր է ԲԿԳ հարթակի, դրա գործառույթների ու դրանում իրենց անելիքների մասին: Իսկ առանց տեղեկացվածության, լիարժեք պատկերացման, հավատի ու գիտակցման, որ իրենք անելիք ունեն երկրի քաղաքական բարեփոխումներում, դժվար թե երիտասարդները ակտիվություն ցուցաբերեն, մասնակցեն ԲԿԳ հարթակին՝ որպես մասնակցայնության գործիքի: Իսկ այս գիտելիքների ու որակների պարագայում երիտասարդներն իրենք հեշտությամբ կգտնեն այս հարթակը, հակառակ դեպքում նրանց «պատահական» մասնակցությունը շարունակություն չի կարող ունենալ, Կառավարությունը պետք է շարունակաբար աշխատի այս ուղղությամբ, հետադարձ կապ պահի հետները. «Գիտակցումը՝ ինչու է պետք բաց կառավարումը, կոլեկտիվ, հանրային շահը, կառավարման համակարգի որ մոդելն է նախընտրում և այլն, հակառակ դեպքում արհեստականորեն եթե հրավիրում ենք, ապա անիմաստ ստիպելու ենք ու արդյունավետ չի լինելու իր մասնակցությունը, ուստի նորից կրթական համակարգին պետք է հղում կատարեն»:

Երիտասարդների առկա սակավ մասնակցությունն էլ ԲԿԳ հարթակում՝ հանձնառությունների առաջարկման ձևաչափում, հիմնականում ուղղված է եղել



կրթական, որոշ չափով էլ՝ սոցիալական խնդիրների լուծմանը, բարեփոխումների իրականացմանը:

Երիտասարդները ևս այն կարծքին են, որ իրենց պետք է ներգրավել ու դիտել որպես գործընկեր ԲԿԳ հարթակում: Երիտասարդները կարող ուժ են, ու նրանց ներգրավումը չպետք է սահմանափակվի միայն գաղափարների գեներացման, այլև դրանց իրականացման փուլում: «Երիտասարդությունը բնակչության քսան տոկոսից ավելին է, ու եթե իրենց չեն ներառում, նշանկում է իրենց չեն լսում»:

### III. Երիտասարդների դերը ԲԿԳ Գործողությունների ազգային ծրագրի (ԳԱԾ) շրջանակներում

ԲԿԳ 4-րդ ԳԱԾ-ի հանձնառությունները ներառում են այնպիսի կարևոր թեմաներ, ինչպիսիք են պետական պաշտոնյաների ակտիվների հայտարարագրումը, իրական սեփականատերերի թափանցիկությունը, բյուջեի թափանցիկությունը, բնական ռեսուրսները, առողջապահությունը և կրթությունը: Մի շարք հանձնառություններ հանրության կողմից հետադարձ կապի մեխանիզմներ են ներառում: Գործողությունների չորրորդ ծրագիրն առաջին անգամ ներառում էր օրենսդրական փոփոխություններ պահանջող հանձնառություններ:

Երիտասարդներին թիրախավորող կամ երիտասարդներին ուղղված հանձնառություններ այս գործողության ծրագրում ևս չկան: Կարելի է հանձնառություններից որոշներում գտնել որոշակի բաղկացուցիչներ, որոնք առնչվում են նաև երիտասարդներին, բայց այնքանով, որքանով հասարակության մյուս խմբերին:

Սակայն, ԳԱԾ-ը համարվում է ԲԿԳ հարթակի այն կարևոր մեխանիզմը, որտեղ երիտասարդների մասնակցությունը հատկապես կարևոր է ու այն դիտարկվում է ԲԿԳ հարթակում երիտասարդների մասնակցայնության ապահովման հնարավոր մեխանիզմներից մեկը: Մասնավորապես, եթե ԳԱԾ-ում ներառել երիտասարդությանը առնչվող հանձնառություններ, որոնք ցանկալի է, որ ներկայացվեն հենց երիտասարդների կողմից, ապա Կառավարության ներկայացուցչի կարծիքով երիտասարդները հենց կարող են դառնալ այդ հանձնառությունների իրականացման փուլում Կառավարությանը վերահսկողը:

Երիտասարդների ընդգրկվածության մյուս կարևոր փուլը ԳԱԾ-ում ներառված հանձնառությունների SS լուծումների մշակման փուլն է, քանի որ SS ընկերություններում մասնագետները հիմնականում ու մեծամասամբ երիտասարդներ են: «Առաջարկում եմ, որ գաղափարների մշակման վաղ փուլից դրանք SS-ի մասնագետների հետ համատեղ քննարկվեն, որովհետև լուծումները, որ կարող են առաջարկվել SS-ի կողմից, լրիվ այլ հարթություն են տանում ու ավելի մեծ արդյունավետություն ապահովում գաղափարի համար: Վերացական լինելուց

խուսափելու, խնդիրը հստակ հասկանալու հարց կա: Գաղափարն այնքան միանշանակ պետք է լինի, բացված նկարագրություն ունենա, որ ընթերցողը հստակ հասկանա առաջադրանքը: Մենք առնչվել ենք այդ խնդրին, երբ առողջապահության հերթագրման համակարգի SS լուծումները պետք է տայինք: Չափազանց լայն պատկերացրինք ու արեցինք ավելի խոշոր մի բան, քան պետք էր: Արեցինք աշխատանքը՝ առանց իմանալու, որ կային արդեն գործիքներ, որոնք չէինք կարող շրջանցել: Ու այս խնդիրներն ու բացերը ունեցանք անգամ 2 հանդիպումներից հետո հանձնառության հեղինակների ու ԲԿԳ այլ գործընկերների հետ, շատ հարցադրումներ արեցինք, քննարկեցինք, բայց մեկ է՝ բացեր մնացին»:

Այստեղ ևս հաղորդակացության բացի ու դրանով պայմանավորված ինֆորմացիայի ոչ լիարժեքության մասին է խոսքը: Ուստի SS գործընկերների՝ ավելի սկզբնական փուլում ներգրավվածությունը պարզ ու հասկանալի կդարձնի գործընթացը, և այդքանով հանդերձ ավելի գրավիչ՝ երիտասարդի համար. «Եթե ինձ համար, ներսում լինելով հանդերձ, դեռ մուրօ կողմեր մնացին, ապա մյուս երիտասարդների մասով արդեն պատկերացնում եմ: Ավելի լայն ու մասշտաբային հաղորդակցության կարիք կա»:

ԲԿԳ ԳԱԾ-ում ընդգրկված հանձնառությունների, դրանց կարճաժամկետ և երկարաժամկետ արդյունքների վերաբերյալ իրազեկումը նախկինում իրականացվում էր միջնաժամկետ ինքնագնահատման զեկույցների միջոցով, որոնք հիմա չեն իրականացվում: Այս մասով ու առհասարակ հաղորդակացության, հետադարձ կապի համար Կառավարությունը հիմա նոր ԲԿԳ կայքի մրցույթ է հայտարարել: Նախատեսվում է, որ հանձնառություններ ունեցող նախարարությունները կայքում պետք է վարեն ինտերակտիվ դեկավարման վահանակներ (dashboard), որտեղ անընդհատ պետք է տեղեկատվությունը թարմացվի հանձնառության շուրջ իրականացվող աշխատանքների, դրանց արդյունքների վերաբերյալ: Շահառու խմբերը, այդ թվում և երիտասարդները, կարող են այդպիսով տեղեկացված լինել նաև հանձնառությունների ընթացքից, հարցեր ուղղել դրանց շուրջ, դիտարկումներ անել:

Իրազեկման մյուս գործիքները վերջնաժամկետ ինքնագնահատման զեկույցն է, անկախ հաշվետվողական մեխանիզմ-զեկույցը, երբեմն ՀԿ-ներն են իրականացնում գնահատումներ և մոնիթորինգներ:

## Եզրակացություն

ԲԿԳ հարթակում երիտասարդների ներգրավվածության, մասնակցայնության հարցը բարելավելու համար ամփոփենք իրականացված հետազոտության արդյունքները առաջարկների տեսքով՝ երիտասարդների ներառականության, կառավարության հաշվետվողականության և այդ համագործակցության կայունության տեսանկյունից:

### Ներառականություն

- Տեղական մակարդակում երիտասարդների մասնակցության մեխանիզմների, հարթակների (այդ թվում և վիրտուալ) կազմավորման, զարգացման անհրաժեշտություն (համաձայն հետազոտության՝ երիտասարդների մասնակցությունն ու ակտիվությունն ավելի բարձր է տեղական մակարդակում և ավելի արդյունավետ՝ նպատակին հասնելու տեսանկյունից):
- Երիտասարդական ուղղվածությամբ շարունակական ծրագրերի ու միջոցառումների իրականացում, որոնք խթանում են մասնակցայնությունը և կրթում երիտասարդներին՝ ավելի գիտակցված, գաղափարական ու կազմակերպված դարձնելով նրանց ակտիվությունը:
- Երիտասարդական ծրագրերին ու միջոցառումներին երիտասարդների ներգրավվածության ապահովում մշակման փուլից սկսած: Իրականացման փուլերում ևս երիտասարդները պետք է լինեն ակտիվ դերակատարներ, այլ ոչ միայն շահառուներ:
- ԲԿԳ ԱԽ թիմում և շահագրգիռ կողմերի ցանկում պարբերաբար նոր մարդկանց՝ «թարմ ուղեղներ»-ի ներգրավման կարևորում, հնարավորությունների ստեղծում, որպեսզի հարթակը «չկարծրանա»: Մինևույն ժամանակ, նորեկների ընդգրկում թիմերում, որտեղ կան արդեն փորձված անձինք՝ հաշվի առնելով ԲԿԳ հարթակի ծավալն ու բարդությունը:
- ԲԿԳ գործընթացներում կամավորների, ինտերնների ներգրավում, ովքեր և՛ կզարգանան ու լիարժեք մասնակիցը կդառնան հարթակի, և՛ ԲԿԳ հարթակում մարդկային ռեսուրսով պայմանավորված բացը կլրացնեն:

### Հաշվետվողականություն

- Ժողովրդավարական գործընթացներում երիտասարդների մասնակցայնությունն ապահովող հարթակների նշանակության, օգտագործման վերաբերյալ հաղորդակցության պատշաճ իրականացում:
- Ֆեյսբուքյան էջի արդյունավետ վարում, որի համար անհրաժեշտ է ավելացնել ակտիվությունն էջում և հետևել SMM-ի կանոններին:
- ԲԿԳ կայքի արդիականացում, ինտերակտիվության բարձրացում:

- Կայքում և սոցիալական ցանցերում տարածվող նյութերի բովանդակության ձևաչափերի վերանայում. լուսանկարների, տեսահոլովակների ձևաչափով նյութերի մատուցում՝ հաշվի առնելով տենդենցներն ու երիտասարդների «լեզուն»:
- ԲԿԳ ԳԱԾ-ում հանձնառություն ունեցող ամեն նախարարության մամուլի բաժնի՝ ԶԼՄ-ների հետ համագործակցության կարևորում, սվյալ հանձնառության շրջանակներում իրականացվող աշխատանքների մասին պարբերաբար իրազեկելու համար:
- ԲԿԳ-ի վերաբերյալ հաղորդակցության իրականացում նաև ՀՀ կառավարության մամուլի բաժնի միջոցով, քանի որ ԲԿԳ-ն Կառավարության ծրագրերից մեկն է:

### Համագործակցության կայունություն, հետադարձ կապ

- Կայքին բաժանորդագրվելու հնարավորություն՝ որպես նորություններին տեղեկացված լինելու մեխանիզմ: Բաժանորդագրման մեխանիզմում ֆիլտրող գործիքի առկայություն, որի միջոցով երիտասարդները կկարողանան բաժանորդագրվել նաև կոնկրետ հանձնառությունների մասին ու դրանց ընթացքից տեղեկացված լինելու համար:
- Երիտասարդական միջոցառումների ու ԲԿԳ միջոցառումների կազմակերպում նաև մարզերում՝ մարզային ՀԿ-ների հետ համագործակցությամբ, որի արդյունքում հնարավոր կլինի մարզային բնակչությանը, հատկապես երիտասարդներին, զարգացնել ու նրանց խնդիրներն ավելի լավ պատկերացնել, ապա նաև բարձրաձայնել:
- Քվոտավորում նախատեսել ԱԽ-ում երիտասարդներին կամ երիտասարդական ՀԿ-ներին ներառելու համար (ԳԱԾ-ում այնպիսի հանձնառության առկայության պարագայում, որի բաղադրիչը երիտասարդներն են), իսկ հանձնառությունների իրականացման փուլում լիազորել նրանց՝ որպես կառավարությանը վերահսկողներ:
- ԲԿԳ ԱԽ-ի հաղորդակցության ռազմավարության մշակում, որ հանրությանը, դրա առանձին խմբերին ու լրագրողներին (որպեսզի իրենք էլ իրենց հերթին հանրայնացնեն տեղեկատվությունը)՝ թիրախավորված և պատշաճ իրազեկի հարթակի ու մասնակցության ընթացակարգերի մասին:
- Հետադարձ կապի ապահովում հանձնառություններ ներկայացրած անձանց հետ, հանձնառության հաստատման կամ մերժման հիքերի ներկայացում:

## ՀԱՎԵԼՎԱԾ 1

### **Խորացված հարցազրույցի հարցաշար**

Հարգելի հարցվող, սույն հետազոտությունն իրականացվում է ՕքսեՋենի «Գիտելիքի փոխանցում՝ Հայաստանում կառավարման հաշվետվողականության և քաղաքացիների մասնակցության խթանման համար» ծրագրի շրջանակներում, որի նպատակն է նպաստել քաղաքացիների մասնակցայնությանը ժողովրդավարական գործընթացներում՝ բարձրացնելով կառավարման թափանցիկությունը և քաղաքականությունների մշակմանը հատկապես կանանց և երիտասարդության ընդգծված ներգրավվածությունը, և այդ ջանքերը ֆորմալացնել Բաց կառավարման գործընկերության (ԲԿԳ) Հայաստանի 2021-2023 թթ. գործողությունների նոր ծրագրում: Ձեր մասնակցությունը չափազանց կարևոր է հետազոտական նպատակներին հասնելու համար:

#### Երիտասարդների քաղաքական ակտիվություն, մասնակցություն.

1. Ըստ ձեզ, երիտասարդները քաղաքականապես ավելի, թե նվազ ակտիվ են հիմա (ընտրություններին, ակցիաներին, ցույցերին մասնակցություն, կուսակցությունների շարքերում ներգրավում և այլն), եթե համեմատենք անցյալի ինչ-որ կետի հետ՝ ձեր նախընտրությամբ, ձեր իմացությամբ:
2. Քաղաքական ակտիվության ո՞ր ձևերն են (օֆլայն՝ կոնկրետ խնդրի շուրջ արշավներ, գործողության կոչեր, բողոքի ակցիաներ, երիտասարդական խմբերի, խորհուրդների անդամակցություն և օնլայն՝ տեսակետների, տեղեկատվության տարածում, քննարկումների ծավալում և այլն) ամենից տարածված երիտասարդների շրջանում, ինչո՞վ է դա պայմանավորված (վերջնարդյունքի հանդեպ հավատ, արդյունավետություն, մասնակցության դյուրինություն և այլն): Որո՞նք են քաղաքական ակտիվության այդ դրսևորման/դրսևորումների առավելությունները և թերությունները:
3. Ըստ ձեզ՝ որքանո՞վ են երիտասարդները օնլայն կապի մեջ մտնում պետական կառավարման մարմինների հետ՝ նամակներով կամ քննարկումների տեսքով: Ինչպե՞ս եք գնահատում այս պրակտիկան մեր երկրում, դինամիկան ինչպիսի՞ն է, արդյունքների մասին ի՞նչ կասեք: Կա արդյո՞ք կարիք և ներուժ ընդլայնելու օնլայն քննարկումների պրակտիկան՝ ներգրավելու և հաղորդակցվելու երիտասարդների հետ առավել ինտենսիվ և արդյունավետ:
4. Երիտասարդների քաղաքական մասնակցությանը խոչընդոտող գործոններ կա՞ն մեր երկրում: Եթե այո, ապա որո՞նք են դրանք.
  - ✓ մշակութային (բացասական կարծրատիպեր, մեխանիզմների և ինստիտուտների բացակայություն, որ կբարձրաձայնեք երիտասարդների ձայնը, ազգային կամ քաղաքական վարքի վերաբերյալ առկա տարածաշրջանային ավանդույթներ, կառուցվածքներ, ինչպիսի՞ն կենտրոնացվածությունն է և այլն),

- սոցիալական (ընտանիք, կրթություն, գենդերային, էթնիկ և սոցիալ-տնտեսական պատկանելիություն, անդամակցություն երիտասարդական շարժումների),
- հոգեբանական (անձնական մոտիվացիա, հավատալիքներ) և այլն:

### Երիտասարդները Բաց կառավարման գործընկերության (ԲԿԳ) հարթակում.

5. Բաց կառավարման գործընկերության (ԲԿԳ), դրա նախաձեռնությունների, ռազմավարությունների, արժեքների ու, առհասարակ, մշակույթի մասին իրազեկումն ինչպե՞ս է իրականացվում հանրությանը, մասնավորապես երիտասարդներին:
6. Հանրային տեղեկատվության և հաղորդակցության ջանքերն արդյո՞ք հարմարեցված են երիտասարդների մեդիա սովորույթների հետ (իրականացվե՞լ են ուսումնասիրություններ կամ օգտագործվե՞լ են նման ուսումնասիրությունների տվյալներ): Եթե այո, ապա ինչպե՞ս:
7. Ինչպե՞ս կարող է կառավարությունը արդյունավետ հաղորդակցվել երիտասարդների հետ՝ համատեղելով ավանդական և հաղորդակցման նոր ուղիները: Տեստեղ և առցանց հաղորդակցության միջոցների առավելություններն (առցանց՝ հասանելիություն մեծ լսարանի) ու թերությունները (չի կառուցում երկարաժամկետ հարաբերություններ և համագործակցություն) որո՞նք են:
8. Երիտասարդներին ԲԿԳ հարթակում ներգրավելու ջանքերում, այնուամենայնիվ, ինչպիսի՞ բացեր կան՝ տարածաշրջանային, տարիքային, գենդերային, սոցիալ-տնտեսական և այլն:
9. ԲԿԳ պլատֆորմը, կառավարությունը ինչպե՞ս են ընկալում երիտասարդների մասնակցությունը ԲԿԳ հարթակին (որպե՞ս լսարան, ովքեր պարզապես պետք է իրազեկված լինեն, թիրախ խո՞ւմբ, որոնց ուղղված հանձնառություններ ցանկալի է ունենալ Գործողությունների ազգային ծրագրում (ԳԱԾ), շահագրգի՞ռ կողմ, ում մասնակցությունը կարևոր է նաև հանձնառությունների ներկայացման, որոշումների կայացման տարբեր մակարդակներում):
10. Ինչո՞ւ է կարևոր, որ կառավարությունը երիտասարդությանը որպես շահագրգիռ կողմ ունենա ԲԿԳ ռազմավարության և նախաձեռնությունների կենտրոնում: Որո՞նք են սրա օգուտները:
11. Ըստ ձեզ՝ ի՞նչ են ակնկալում երիտասարդները ԲԿԳ պլատֆորմից: Ո՞րն է մասնակցության իրենց մոտիվացիան, շահը: Ինչպե՞ս է սա արտացոլվում երիտասարդների հետ տարվող հաղորդակցության մեջ (հաղորդակցության ոճ, ազդեցություն գործողներ, կարծիքի առաջատարներ), ինչպե՞ս է այն հետ կոմունիկացվում՝ արդյունքի տեսքով:

12. Որո՞նք են այն թեմաները/խնդիրները, որոնք հատկապես հետաքրքրում են և առնչվում երիտասարդների հետ (կրթություն, սոցիալական ներառում և բազմազանություն, բնակարանային ապահովման էկոնոմ հնարավորություններ, առողջապահություն և մոբիլություն և այլն): Ո՞ր թեմաների շուրջ հանձնառություններում, առաջարկներում են նրանք հատկապես ակտիվ:
13. Ի՞նչ ֆորմալ և ոչ ֆորմալ կառույցներ են օգտագործվում ԲԿԳ հաղորդակացության գործընթացում (ՀԿ-ներ, դպրոցներ, երիտասարդական խորհուրդներ՝ լոկալ, ազգային, միջազգային և այլն):
14. Արդյոք ձևավորվել է ԲԿԳ աշխատանքային խումբը, եթե այո, ապա ի՞նչ մեխանիզմով: Կա՞ հատուկ քվոտավորում աշխատանքային խմբում երիտասարդներին կամ երիտասարդական ՀԿ-ներին ներառելու համար:

### **Երիտասարդների դերը Գործողությունների ազգային ծրագրում (ԳԱԾ).**

15. ԲԿԳ Գործողությունների ազգային ծրագրում (ԳԱԾ) ընդգրկված հանձնառությունների, այդ գործընթացներին մասնակցելու ընթացակարգերի, հանձնառությունների իրականացման ընթացքի, դրանց կարճաժամկետ և երկարաժամկետ արդյունքների վերաբերյալ իրազեկումն ինչպե՞ս է իրականացվում, հատկապես երիտասարդների շրջանում:
16. Ինչպե՞ս է իրականացվում երիտասարդների մոբիլիզացիան ԳԱԾ-ի հանձնառությունների հավաքագրման համար:
17. ԲԿԳ բազմաշահագրգիռ ֆոռումում և ԳԱԾ-ի խորհրդակցական գործընթացներում ընդգրկվա՞ծ են երիտասարդները:
18. Իրականացվում է արդյո՞ք մոնիթորինգ և գնահատում՝ ԳԱԾ-ի ազդեցությունը երիտասարդների վրա պարզելու համար:
19. Արդյո՞ք վերջին՝ 4-րդ ԳԱԾ-ը ներառում է որևէ հանձնառություն/հանձնառություններ, որոնք թիրախավորում են երիտասարդներին:
20. Արդյո՞ք հատկացվում են ռեսուրսներ, ֆոնդեր և կարողություններ՝ աջակցելու երիտասարդների ներգրավածությանը ԲԿԳ և ԳԱԾ-ի զարգացման և իրականացման գործընթացներում:
21. Ի՞նչ առաջարկներ ունեք՝ ուղղված ԲԿԳ պլատֆորմում երիտասարդների մասնակցության բարձրացմանը, նրանց մոտիվացնելուն:

## ՀԱՎԵԼՎԱԾ 2

### Տոկուս խմբային քննարկման հարցաշար

Հարգելի հարցվող, սույն հետազոտությունն իրականացվում է ՕքսեՋենի «Գիտելիքի փոխանցում՝ Հայաստանում կառավարման հաշվետվողականության և քաղաքացիների մասնակցության խթանման համար» ծրագրի շրջանակներում, որի նպատակն է նպաստել քաղաքացիների մասնակցայնությանը ժողովրդավարական գործընթացներում՝ բարձրացնելով կառավարման թափանցիկությունը և քաղաքականությունների մշակմանը հատկապես կանանց և երիտասարդության ընդգծված ներգրավվածությունը, և այդ ջանքերը ֆորմալացնել Բաց կառավարման գործընկերության (ԲԿԳ) Հայաստանի 2021-2023 թթ. գործողությունների նոր ծրագրում: Ձեր մասնակցությունը չափազանց կարևոր է հետազոտական նպատակներին հասնելու համար:

1. Ըստ ձեզ, երիտասարդները քաղաքականապես ավելի, թե նվազ ակտիվ են հիմա (ընտրություններին, ակցիաներին, ցույցերին մասնակցություն, կուսակցությունների շարքերում ներգրավում և այլն), եթե համեմատենք անցյալի ինչ-որ կետի հետ՝ ձեր նախընտրությամբ, ձեր իմացությամբ:
2. Թվարկված թեմաները/խնդիրները գնահատեք 1-5 բալանոց սանդղակով ըստ՝ ձեզ համար դրա ունեցած առաջնահերթության.
  - Կլիմայի փոփոխության համար գործողությունների ձեռնարկում
  - Խտրականությունից և հետապնդումից ազատ լինել
  - Հեռախոսային և ինտերնետ հասանելիություն
  - Լավ աշխատանքի հնարավորություններ
  - Ավելի լավ առողջապահություն
  - Աշխատել չկարողացող մարդկանց աջակցություն
  - Անտառների, գետերի և օվկիանոսների պաշտպանություն
  - Մաքուր ջրի և սանիտարական պայմանների հասանելիություն
  - Լավ կառավարում և արդյունավետ ինստիտուտներ
  - Տղամարդկանց և կանանց հավասարություն
  - Ավելի լավ տրանսպորտ և ճանապարհներ
  - Հուսալի էներգիա տանը
  - Հանցագործություններից և բռնությունից պաշտպանվածություն
  - Մատչելի և սննդարար սնունդ
  - Լավ կրթություն
  - Քաղաքական ազատություններ
3. Քաղաքական ակտիվության ո՞ր ձևերն են **(օֆլայն՝** կոնկրետ խնդրի շուրջ արշավներ, գործողության կոչեր, բողոքի ակցիաներ, երիտասարդական խմբերի, խորհուրդների անդամակցություն և **օնլայն՝** տեսակետների, տեղեկատվության տարածում, քննարկումների ծավալում և այլն) ամենից



տարածված երիտասարդների շրջանում, ինչն՝ է դա պայմանավորված (վերջնարդյունքի հանդեպ հավատ, արդյունավետություն, մասնակցության դյուրինություն և այլն): Որո՞նք են քաղաքական ակտիվության այդ դրսևորման/դրսևորումների առավելությունները և թերությունները:

4. Ըստ ձեզ՝ որքանո՞վ են երիտասարդները օնլայն կապի մեջ մտնում պետական կառավարման մարմինների հետ՝ նամակներով կամ քննարկումների տեսքով: Ինչպե՞ս եք գնահատում այս պրակտիկան մեր երկրում, դինամիկան ինչպիսի՞ն է, արդյունքների մասին ի՞նչ կասեք: Կա արդյո՞ք կարիք և ներուժ ընդլայնելու օնլայն քննարկումների պրակտիկան՝ ներգրավելու և հաղորդակցվելու երիտասարդների հետ առավել ինտենսիվ և արդյունավետ:
5. Երիտասարդների քաղաքական մասնակցությանը խոչընդոտող գործոններ կա՞ն մեր երկրում: Եթե այո, ապա որո՞նք են դրանք.
  - մշակութային (բացասական կարծրատիպեր, մեխանիզմների և ինստիտուտների բացակայություն, որ կբարձրաձայներ երիտասարդների ձայնը, ազգային կամ քաղաքական վարքի վերաբերյալ առկա տարածաշրջանային ավանդույթներ, կառուցվածքներ, ինչպիսին կենտրոնացվածությունն է և այլն),
  - սոցիալական (ընտանիք, կրթություն, գենդերային, էթնիկ և սոցիալ-տնտեսական պատկանելիություն, անդամակցություն երիտասարդական շարժումների),
  - հոգեբանական (անձնական մոտիվացիա, հավատալիքներ) և այլն:

## **Երիտասարդները Բաց կառավարման գործընկերության (ԲԿԳ) հարթակում.**

6. Բաց կառավարման գործընկերության (ԲԿԳ), դրա նախաձեռնությունների, ռազմավարությունների, արժեքների ու, առհասարակ, մշակույթի մասին տեղյա՞կ եք: Եթե այո, ապա ինչպե՞ս եք տեղեկացել և ինչպե՞ս եք շարունակում տեղեկացված մնալ (հաղորդակցության միջոցները, եղանակները որո՞նք են):
7. ԲԿԳ հանրային տեղեկատվության և հաղորդակցության ջանքերն արդյո՞ք հարմարեցված են երիտասարդների մեղիա սովորույթների հետ: Եթե այո, ապա ինչպե՞ս:
8. Երիտասարդներին ԲԿԳ հարթակում ներգրավելու ջանքերում, այնուամենայնիվ, ինչպիսի՞ բացեր կան՝ տարածաշրջանային, տարիքային, գենդերային, էթնիկ, սոցիալ-տնտեսական և այլն, որ դուք նկատել եք:
9. ԲԿԳ պլատֆորմը, կառավարությունը ինչպե՞ս են ընկալում երիտասարդների մասնակցությունը ԲԿԳ հարթակին (որպե՞ս լսարան,

ուլքեր պարզապես պետք է իրազեկված լինեն, թիրախ խոմբ, որոնց ուղղված հանձնառություններ ցանկալի է ունենալ Գործողությունների ազգային ծրագրում (ԳԱԾ), շահագրգիռ կողմ, ում մասնակցությունը կարևոր է նաև հանձնառությունների ներկայացման, որոշումների կայացման տարբեր մակարդակներում):

10. Ինչո՞ւ է կարևոր, որ կառավարությունը երիտասարդությանը որպես շահագրգիռ կողմ ունենա ԲԿԳ ռազմավարության և նախաձեռնությունների կենտրոնում: Որո՞նք կլինեն դրա օգուտները:
11. Ի՞նչ էք դուք՝ որպես երիտասարդներ, ակնկալում ԲԿԳ պլատֆորմից, ի՞նչ է տալիս այն ձեզ՝ որպես երիտասարդի: Ո՞րն է ԲԿԳ պլատֆորմին՝ որպես մասնակցայնության գործիքի, մասնակցության ձեր մոտիվացիան, շահը:

### **Երիտասարդների դերը Գործողությունների ազգային ծրագրում (ԳԱԾ).**

12. ԲԿԳ Գործողությունների ազգային ծրագրում (ԳԱԾ) ընդգրկված հանձնառությունների, այդ գործընթացներին մասնակցելու ընթացակարգերի, հանձնառությունների իրականացման ընթացքի, դրանց կարճաժամկետ և երկարաժամկետ արդյունքների վերաբերյալ հետաքրքրված էք: Եթե այո, ապա ինչպե՞ս էք իրազեկվում:
13. ԲԿԳ արժեքներից բխող ի՞նչ խնդիրներ/թեմաներ են ձեզ հիմնականում հուզում, հետաքրքրում: Երբևէ առաջարկներով/հանձնառություններով հանդես եկե՞լ էք տվյալ խնդրի շուրջ՝ ԲԿԳ պլատֆորմի շրջանակներում: Ո՞ր թեմաների շուրջ հանձնառություններում, առաջարկներում են երիտասարդները հատկապես ակտիվ:
14. Արդյո՞ք վերջին՝ 4-րդ ԳԱԾ-ում կա որևէ հանձնառություն/հանձնառություններ, որոնք թիրախավորում են երիտասարդներին:
15. Ի՞նչ առաջարկներ ունեք՝ ուղղված ԲԿԳ պլատֆորմում երիտասարդների մասնակցության բարձրացմանը, նրանց մոտիվացնելուն: